ՀԱՅԱՍՏԱՆ-ԱԴՐԲԵՋԱՆ ՀԱՇՏՈՒԹԻՒՆԸ ՉԿԱՅԱՑԱՒ

«Մեզապոլիս-Էքսպրես» շաբաթաթերթում հրապարակուած հաղորդման համաձայն Մոսկուայում Հայաստանի եւ Ադրբեջանի ներկայացուցիչները փորձել են պայմանաւորուածութեան գալ։ «Մեմորիալ» ընկերութեան եւ մոսկովեան Հելսինկիի խմբի միջնորդութեամբ կազմուել է մի դիմում, որը համաձայնել են ստորագրել ադրբեջանցիների Մոսկովեան Միութեան համանախագահ Ֆուադ Իսկենդերովը եւ Հայաստանի ներկայացուցիչը, որի ազգանունը Իսկենդերովը խնդրել է չյիշատակել (պայմանաւորուող կողմերը գործել են բացառապէս սեփական նախաձեռնութեամբ)։ Դիմումի մէջ ասուած է. «Երկու հանրապետութիւնների խորհրդարանները դիմում են զինուած անձանց ու խմբաւորումներին կոչ անելով կտրականապէս ձեռնպահ մնալ զէնքի գործադրումից, միութենական կառավարութիւնը իր ենթակայութեան տակ գտնուող զօրքերին հրաման է արձակում կրակն անյապաղ դադարեցնելու մասին։ Միլիցիայի Յատուկ Նշանակութեան Հանրապետական Ջոկատներին համանման հրաման պէտք է տան Հայաստանի ու Ադրբեջանի կառավարութիւնները։

Մենք ընդունում ենք զինուած խմբաւորումները զինաթափելու մասին նախագահ Գորբաչովի հրամանագրի իրաւական հիմնաւորուածութիւնը։ Միեւնոյն ժամանակ մենք գիտենք, որ այդ հրամանագրի կատարումը ուղեկցւում է մարդկային զոհերով։ Մենք համոզուած ենք, որ զինաթափումը կարող է կատարուել բնակչութեան ուժերով՝ Ադրբեջանի եւ Հայաստանի խորհրդարանների եւ առաջատար քաղաքական շարժումների կոչով։

Երկու հանրապետութիւնների քաղաքացիներին անհրաժեշտ է սեփական անվտանգութեան կայուն եւ համոզիչ երաշխիքներ»։

«Մեմորիալ»-ը եւ Հելսինկիի խումբը պէտք է հաստատէին դիմումը։ Իսկենդերովը, իր ասելով, համաձայնել է դիմումի բովանդակութեանը։ Հայաստանի ներկայացուցիչը մեկնել է Երեւան խորհրդակցելու։ Վերադառնալուց յետոյ նա կտրականապէս հրաժարուել է ստորագրել դիմումը։ Հաշտութիւնը չի կայացել։